

373

V-28

0.120-10

ՄԱՆՐ ՎԱՐԿԻ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1904 թ. ՅՈՒՆԻՍԻ 7-ի ՕՐԵՆՔՈՎ



Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ», ԼԵՂՏՈՒԿՈՎ, 4
1907

24 JUN 2013

28

300
1449-20

ՄԱՆՐ ՎԱՐԿԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1904 Թ. ՅՈՒՆԻՍԻ 7-Ի
ՕՐԷՆՔՈՎ, ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՁԵԻՐ

Մենք միշտ ասում, կրկնում ենք, որ պորեն ու զիւղական արհեստաւորների ձեռագործներ առնողները (СКУПЩИКИ), ուրիշ խօսքով՝ «բռուկներն» ու վաշխառուները, քանզում են մեր զիւղերը:

Բանուորը պատրաստում է մի իր, առնողը էժան զնով ձեռք է բերում այդ իրը, իսկ թանկ զնով վաճառում նրան, ում որ այդ իրը պէտք է. և դուրս է գալիս, որ բանուորին մնում է այնքան չնչին աշխատանք, որ հազիւ ապահովում է նրա ապրուստը. իսկ պատրաստած առարկայից մնացած ամբողջ օգուտը մանում է այն առւտրականի զրպանը, որին մենք արհամարհանքով անուանում ենք չարչի (торгашь).

Բայց լինում է և աւելի վատ. ձեռագործի համար հարկուտ է նիւթ, իսկ մինչև իրը պատրաստ կը լինի ու կը վաճառուի, բանուորն ուտել-խմել է ուղում: Նրան կրկին ծառայութեան է գալիս առնողը, միայն այստեղ նա արդէն դառնում է ոչ միայն առնող, այլ ուղղակի «բռուկ» ու ժանդարմ: Նիւթը նա պարտք է տալիս, միայն տալիս է վատը, իսկ զինք՝ երեք անգամ թանկ է հաշւում և նախօրօք էլ պայման է դնում, թէ ինչ զնով դարբինը, հիւսնը, կօշկակարը կամ այլ արհեստաւորը պարտաւոր են վաճառելու նրան իրանց պատրաստած իրերը. իսկ այդ իրերին, ինչպէս ինքն ըստ ինքեան հասկանալի է, նշանակում է, ընդհակառակը, կէս-զին: Նոյն առնողը իւր խանութից, ինչքան ուզենաք, բաց կը թողնի պարտքով, 'ի հաշիւ ապագայ ապրանքի, և՛ ալիւր, և՛ աղ, և՛ թէյ ու շաքար և այն բոլորը, ինչ որ հարկաւոր է տնային պիտոյքների համար, միայն այդ բոլորի վրայ նա զին կը դնի «խղճմտանքով», ինչքան որ քէֆը տալ. և երբ, վերջ 'ի վերջոյ, բանը հասնի հաշիւ տեսնելուն, դուրս կը գալ, որ վատ նիւթից պատրաստուել են վատ իրեր. իսկ նա, այդ «բռուկները», հուպ

Մանր վարկի հաստատութիւնները:

կը տայ, ապրանքը անպէտք կը համարի, կամ թէ զինք կը պակասցնի: Եւ դուրս կը դայ, որ բանուորը ոչինչ չի աշխատել, իսկ առնողը մեծ օգուտ է վերցրել և՛ ճիւթից, և՛ պարտքով բաց թողած մթերքներէից, և՛ զնած ապրանքից:

Նոյնը պատահում է նաև երկրագործութեան մէջ: Որպէսզի ապրել կարողանայ մինչև նոր հունձը, զիւղացին՝ ապագայ գարնանային ու ամառային աշխատանքի ապահովութեամբ փող է վերցնում և, ի հարկէ, ստանում է աւելի քիչ, քան թէ նա կստանար՝ նոյն աշխատանքները կատարելու համար, եթէ փորձուէր ոչ առաջուց, այլ իւր ժամանակին, այսինքն՝ գարնանը կամ ամառը: Եթէ ոչ մի տեղից նա չը կարողանայ իւր աշխատանքի ապահովութեամբ փող հարել, նրան չը կամ ապրանք պարտք տալ չի մերժի խանութպանը կամ միկիտանչին (шинкарь), իսկ եթէ նրանք էլ չտան՝ ապա իւր հարուստ հարեանը միշտ պատրաստ է, բայց կրկին ապրանքին զին դրուած կը լինի մէկ ու կէս, երկու անգամ աւելի, իսկ հարեանը պարտք տուած զրամի տեղ դրաւ կը վերցնի արտը կամ հունձը՝ հաշուած «սաժէնով» կամ հողի տարածութեան այլ չափով: Այսպէս թէ այնպէս, հաշիւենկամ հողի տարածութեան այլ չափով: Այսպէս թէ այնպէս, հաշիւենկամ հողի տարածութեան այլ չափով: Այսպէս թէ այնպէս, հաշիւենկամ հողի տարածութեան այլ չափով: Այսպէս թէ այնպէս, հաշիւենկամ հողի տարածութեան այլ չափով:

Սակայն գիւղացին կամ արհեստաւորը հնարաւորութիւն ունեն իրանց փոխ առած զրամի համար անելիք այդ բոլոր աւելորդ վճարներին մեծ մասը խնայելու: Միայն չպէտք է մոռնալ, որ երկնքից մանանայ չի թափուում, որ ոչինչ ինքն իրան ձեռք չի բերուում, որ հարկաւոր է վճել ու անձամբ դործի ձեռնարկել: Աւելին. դա այնպիսի մի գործ է, որ մի մարդ իւր ոյժերով, կամ իւրաքանչիւրը առանձին-առանձին ոչինչ անել չեն կարող: Անհրաժեշտ է, որ նրանք, ովքեր իրանց շրջառութիւնների համար փոխառութեան կարիք են զգում, կամ, ինչպէս եւրոպական ու գիտնական լեզուով ասում են, ովքեր կարիք են զգում վարկի, խօսքերը մէկ անեն, զործեն միասին ու փոխադարձ համաձայնութեամբ:

Մանր վարկի հաստատութիւններ, այսինքն՝ այնպիսի դրամարկղեր ու փոքրիկ բանկեր, որոնց նպատակն է յատկապէս բանուոր դասակարգին փոքր փոխառութիւններ տալ, մեզանում գոյութիւն ունին վաղուց և զանազան անուններով: Կան գիւղական ու համայնական բանկեր (сельские и волостные банки), նախկին պետական գիւղացիներէրի նպաստիչ դրամարկղեր (вспомогат. кассы бывших государств. крестьянъ), նախկին կայսերական՝ ուզէլնի գիւղացիների բանկերը

(банки бывших удѣльных крестьянъ), փոխառութիւնային ընկերութիւններ (ссудо-сберегательные товарищества), վարկային ընկերութիւններ (кредитные товарищества) և այլն: Դեռ 1895 թ. մանր վարկի հաստատութիւնների համար հրատարակուած է ընդհանուր օրէնք, որը իրաւունք էր տալիս ֆինանսական մինիստրին՝ հաստատելու այդ օրինակ հաստատութիւնների կանոնադրութիւններ, իսկ Պետական Բանկին — տալու առանձին, երկարատե փոխառութիւններ յատկապէս վարկային հաստատութիւններ հիմնելու համար: Դրանից էլ առաջ, 1871 թուականին, Պետական Բանկին օրէնքով իրաւունք էր տուած վարկ բաց անել փոխառութիւնային ընկերութիւններին, այսինքն՝ նրանց փող պարտք տալ, որպէս զի այդ ընկերութիւնները, իրանց կարգին, կարողանան փոխ տալ իրանց ընկերներին: 1894 թուի նոր կանոնադրութեամբ բանկը կարող է այդ եղանակով վարկ բաց անել ոչ միայն փոխառութիւնային ընկերութիւններին, այլ և առհասարակ մանր վարկի բոլոր հաստատութիւններին, ինչ տեսակի էլ որ նորա լինեն: Վերջապէս, 1904 թուականին, 1895 թ.-ի օրէնքի տեղը՝ նորից հրատարակուած է՝ մանր վարկի հաստատութիւնների համար ընդհանուր օրէնք, որը, սակայն, այդ գործում նախկինի հետ համեմատած, քիչ փոփոխութիւն է մտցրել:

Այսպէս ուրեմն, կանոններ հրատարակուել են վաղուց և շատ անգամ, բայց, այնուամենայնիւ, մանր վարկի համար յատկացրած հաստատութիւնները առաջ են դնացել ոչ այնքան յաջող, յամենայն դէպս ոչ այնպէս, ինչպէս յանկալի ու հարկաւոր էր: Սակայն, եթէ լաւ նայենք գործին, պէտք է խոստովանենք, որ դրա պատճառն այն է, որ մենք ինքներս չենք ցանկացել մատ մատի կպցնել: Մենք միշտ սպասում ու ցանկանում ենք, որ ուրիշ որեւէ մէկը մեզ պատրաստին առաջարկի: Դրանիցս անգամ ես առիթ եմ ունեցել տեսնելու, թէ ինչպէս շատերը զիմում են Պետական Բանկին կամ հէնց ուղղակի ֆինանսական մինիստրին ու խնդրում պարտք տալ 100, 200 և մինչև իսկ 50—70 ռուբլի:

Ի՞նչ անի Բանկը այսպիսիների նկատմամբ. եթէ այդպիսի դրամարներ փոխ տայ, ի՞նչքան փոխառուներ դուրս կը դան: Ո՞րտեղ, ի՞նչ ճանապարհով իմանալ մի քանի հարիւր, հազար վերստ հեռաւորութեան վրայ, թէ ո՞վ է այս ինչ փոխառուն: Իսկ յետոյ, եթէ հարկաւոր լինի պարտքը չետ ստանալ — ի՞նչ հեռատես աչքեր ու երկար ձեռքեր պէտք է ունենալ, որպէսզի գտնել ռուբլիներ այդ փոխառուին:

Բանկը մի քանի անգամ, իսկապէս, փորձել է տալ այդպիսի փոխա-

տութիւններ և ամեն անգամ միայն համոզուել է, որ դա իւր համար բոլորովին անկարելի մի բան է։ Սկզբում դալիս են, յիրաւի, գործունեայ, լաւ, եռանդոտ մարդիկ, վերջնում են գործի համար դրամ ու ժամանակին վերադարձնում։ Բայց դրանից յետոյ՝ դրանց օրինակին հետեւելով, դալիս է ամեն մարդ ու բերում իւր հետ, ընդունուած կարգով, իւր բարելոսութեան մասին ամեն տեսակ «վաւերագրեր», վերջրած գիւղական կամ ուրիշ զանազան իշխանութիւններից։ Բայց դառն փորձը ապացուցել է, որ ոչ մի այդպիսի «վաւերագիր», ոչ մի «վկայական» գործին չի օգնում։ Ո՞վ է նրանց նանաչում։ Ի՞նչպէս են ստացւում այդ թղթերը։ Եւ յիրաւի, չը նայած այդ «վաւերագրերին» (удостоверение), սկսում են պարտքի պայմանաժամերն անց կացնել, չետածղել, ձգձգել, և պարտապանները շատ շուտ պիտի են ընկնում, որ Բանկը հեռու է, որ նրա ձեռքերը կարն են, և որ նա, իսկապէս, նրանց ոչինչ անել չի կարող։

Ահա այդպէս, իւրաքանչիւրս առանձին-առանձին, ուրիշ որեւէ տեղից փող խնդրել — կարող ենք։ Բայց հող տանել, մտածել, թէ ինչպէս անենք բոլորս միասին, որպէս զի մեզանից ամեն մէկը — ես էլ, նա էլ, երրորդն էլ կարողանանք փող ճարել ոչ միայն այսօր, այլ և վաղը, միւս տարի և առհասարակ ամեն անգամ, կարիք եղած ժամանակ, — այդ մենք վճռում ենք մեծ դժուարութեամբ։ Մենք միշտ մտածում ենք այսպէս։ Ինչու ես պէտք է «ուրիշների համար» աշխատեմ գլուխ բերել այնպիսի մի գործ, որը օգուտ ու չարմարութիւն է տալիս ոչ թէ մենակ ինձ, այլ և իմ հարեանին։

Մինչդեռ առանց այդ համաձայնութեան, առանց փոխադարձ օգնութեան, այդ գործում ոչինչ անել չի կարելի։ Մէկ մէկու մենք ինքներս ենք միայն ճանաչում։ Մեր մասին մենք լաւ գիտենք, թէ ով ինչպիսի մարդ է, թէ ում կարելի է հաւատալ, ում ոչ։ Թէ ով այդ դրամը գործի մէջ է դնում, ով այդ փողերը մօտիկ տօն օրը, դատարկ տեղը, քաղաք տանում։ Իսկ եթէ մէկին, իսկապէս իւր անհրաժեշտ կարիքների համար, փող է հարկաւոր — ով այդ դժուար գրութիւնից կարող է դուրս գալ, եթէ դրամական լաւ օգնութիւն լինի այդպիսի մէկին և ում — փոխառութեամբ, միեւնոյնն է, դժբախտութիւնից ազատել չի կարելի։ Ուրիշ փողերը միայն կարող են կորչել։

Ուրեմն, բացի վաշխառու «առնողներից» և այլ բարերարներից, մենք ինքներս էլ, ընդհանուր համաձայնութեամբ, կարող ենք խոհեմաբար փող պարտք տալ և այն էլ այնպէս, որ մենք ինքներս մեր գոր-

ծերի, մեր կարգադրութիւնների համար պատասխանատու լինենք մէկ մէկու ու մարդկանց առաջ։

Մանր վարկի հաստատութիւնների մասին շատ անգամ է խօսուած ու գրուած. մի քանի անգամ այդ մասին խօսք է եղել «գիւղական տեղեկատու» («Сельскій вѣстникъ») լրագրում։ Բայց էլի — շատ քիչ մարդ այդ մասին մի բան գիտէ. կարգում ու մոռանում են. իսկ կարիք եղած ժամանակ կրկին գնում են իրանց հին բարերար «առնող-վաշխառուի» մօտ. հայհոյում են նրան, որ նա ծնշում է, խարում, կշեռքի մէջ խարդախում, բայց որ մի բան անեն նրանցից ազատուելու, նրա հետ հաշիւները մաքրելու համար — այնուամենայնիւ չեն անում։ Ուրեմն չի խանդարում կրկին անգամ յիշեցնել, թէ ինչ ու ինչպէս կարելի է անել, ինչպէս գործի ձեռնարկել, որպէսզի գիւղում էլ հեշտ ու էժան փող պարտք ճարել։

Վերեն ասացինք, որ մանր վարկի զանազան տեսակ հաստատութիւններ մեզանում գոյութիւն ունեն վաղուց և, եթէ ուզում էք, բաւական շատ։ Միայն գիւղական ու համայնական բանկերի, նախկին պետական զիւղացիների նպաստիչ դրամարկիները և այլ նման հաստատութիւններ, որ հիմնում են գիւղական կամ համայնական ամբողջ հասարակութիւններ, հասնում են թուով մօտ 5000։ Փոխատու-խնայողական ընկերութիւնները, այսինքն այնպիսիները, որոնք հիմնում են փոռնով ցանկացողները — հասնում են 900-ի։ Բայց յայտնի է, որ դրանց ահագին մեծամասնութիւնն իրենց գործերը վատ են տանում։ Եղած փողերը վաղուց արդէն բաժանուած են (այդպիսով բաժանուած փողերի քանակութիւնը այնքան էլ քիչ չէ — 80 միլիոնից աւելի)։ Բայց այդ փողերի մեծ մասը անցել է այնպիսի ձեռքեր, որոնց կալել ու պուկ չի դալիս. ուրիշ փոխառութիւններ՝ վաղեմականութեան պատճառով բոլորովին կորել են, իսկ շատերն էլ շատ դժուար է, յամենայն դէպս, չեա ստանալ, որպէսզի այդ փողերը նորից շրջառութեան մէջ դնել, նորից փոխ տալ նրանց, ում որ այժմ հարկաւոր է։

Քննել, թէ ինչպէս և ինչու է այդպէս պատահել, այժմ ժամանակը չէ. գուցէ այդ մասին առիթ ունենանք խօսելու յետոյ. թեպէտ չի կարելի այստեղ չը չիշել, որ այդ վարկային հաստատութիւնների անյաջողութեան մէջ մեղաւոր ենք մենք ինքներս, մենք, որ հիմնել ենք այդ հաստատութիւնները, որ փողերը համարել ենք մեր սեպականը և դադարել ենք վճարելուց։

Բայց ինչպէս և վատ վերջացրած լինեն նախկին հաստատութիւնները, այժմ արդէն օրէնքով հաստատուած են նոր կարգեր և սկսել

են հիմնուել նոր հաստատութիւններ. դրանց մասին էլ կը խօսենք հիմա: Գուցէ, Աստուած տայ, նախկին վարկային հաստատութիւնների անչափողութիւններից մի բան սովորած լինինք. հենքի հետ մի կերպ վերջացնենք հաշիւներս ու նորերի դործը տանենք աւելի խոհեմութեամբ ու հմտութեամբ:

Որ նոր ձեռով հիմնուող հաստատութիւնները հանաք բան չեն, որ արժէ, որ մեզանից ամեն մէկը դրանց մասին մտածէր ու աշխատէր օգտուել դրանցից, այդ պարզ երևում է հէնց թէկուզ նրանից, որ այս բոլորիս (օգոստոս 1906 թ.) մեր հայրենիքի զանազան անկիւններում դործում են մօտ 1200 միայն նոր բացած վարկային ընկերութիւններ: Ներկայ տարուայ սկզբին դրանց թիւը չէր հասնում 800-ի (առ 1-ն Յունուարի 1906 թ. կար 776 ընկերութիւն). իսկ դրանց մէջ դեռ այդ ժամանակ մասնակից-ընկերների թիւը հասնում էր 300 հազարի. Պետական Բանկից այդ ընկերութիւններին տրուած է $2\frac{1}{2}$ միլիոնից աւելի. իսկ իրանք մասնաւոր մարդկանցից հաւաքել են 6 միլիոնի աւանդներ ու փոխառութիւններ: Այդ ընկերութիւնները՝ իրանց գոյութեան համեմատաբար կարճ ժամանակամիջոցում զիջել են սեպհական միջոցներ, գլխաւորապէս իրանց օգուտներից, 800 հազար բուրլուց ոչ պակաս. և այդ բոլոր աղբիւրներից փոխ են տուել առ 1-ն Յունուարի ներկայ 1906 թ. համարեա $8\frac{1}{2}$ միլիոն բուրլի: Այժմ, Օգոստոս ամսին այդ բոլոր վարկային ընկերութիւնների փոխառութիւնների ընդհանուր գումարը կը լինի, հաւանականաբար 12 միլիոնից ոչ պակաս:

Հին, նախկին հաստատութիւններին փոխառուները (ինչպէս վերեն ասացինք) պարտք են 80 միլիոն բուրլի. նոր վարկային ընկերութիւններին — ընկերները պարտք են միայն $8\frac{1}{2}$ միլիոն բուրլի: Բայց տարբերութիւնը նրանցում այն է, որ հին հաստատութիւնների մէջ՝ բաժանուած փողերը դարձել են մեծ մասամբ մեռած դրամադուլիս, հնացած պարտք, որից փոխառուները ոչ մի օգուտ չ'ունին, միայն վճարում են, ինչպէս տուրք, տոկոսներ ու չը դիտեն, ինչպէս աղատու են այդ պարտքերից. նոր վարկային ընկերութիւնների մէջ — փոխառուն դրամը առայժմ դրել է շրջառութեան մէջ. փողերը նա ծախսում է, անտեսութիւնից շահով չեա ստանում, վերադարձնում ընկերութեան, որը նորից տալիս է նոր շրջառութեան համար ուրիշ ընկերոջ կամ նորից նրան, նայած կարիքին:

Ես բոլորովին դիտմամբ ասացի, որ նոր ընկերութիւնների մէջ փոխառուն պարտք վերցրած փողերը առայժմ դրել է շրջառութեան մէջ: Բայց եթէ մենք նոր ընկերութիւնների հետ վարուենք նոյնպէս

անփութ, յաճախ նոյն իսկ անբարեխիղճ, ինչպէս հենքի, ապա զարմանալի ոչինչ չը կայ, եթէ նորերի հետ պատահի նոյնը, ինչ որ հենքի՝ եթէ նորերն էլ դադարեն մեզ ծառայութիւն մատուցանելուց, դադարեն մեզ օգուտ բերելուց ու դառնան մեզ համար բեռ ու ծանրութիւն: Ս.մեն բան կախուած է մեզանից ու միայն մեզանից և 'ի դուր չպէտք է փնտռել մեղաւորին ոչ օրէնքի, ոչ «իշխանութեան» և ոչ մի այլ բանի մէջ. դործը մեր ձեռքին է — ինչպէս ուղեւորը, այնպէս էլ կը տանենք. ուղեւորը՝ կը տանենք յօգուտ մեր և մեր որդկերանց. ուղեւորը — 'ի վնաս մեր և 'ի կործանում մեր ապագայ սերնդի:

Վարկային հաստատութիւնները, որոնք իրենք վարկի կարիք ունեն, կարող են իրենց համար վարկ հիմնել, — 1904 թ. նոր օրէնքով — կարող են լինել երկու գլխաւոր տեսակի. հասարակական և ընկերական: Կան նաև զեմստօյի դրամարկղեր, բայց նրանց մասին ես չեմ խօսի, որովհետեւ այս բոլորիս մեզ զբաղեցնում են միայն այն վարկային հաստատութիւնները, որոնք գտնւում են մեր ձեռքին և կախուած են մեզանից:

Մանր վարկի հասարակական հաստատութիւնները կոչւում են փոխատու-խնայողական դրամարկղեր (ссудо-сберегательные кассы) և հիմնւում են հասարակութեան վճռի համաձայն, զիւղական ու համայնական հասարակութիւնների կողմից:

Թէև այստեղ խօսքը զիւղական ու համայնական փոխատու-խնայողական դրամարկղների մասին է, բայց այստեղ հասկացւում է նաև կազակների հողերի վրայ գտնուած ստանիցանների ու խուտորների դրամարկղերը (станичные и хуторские кассы). և եթէ ես ամեն անգամ զիւղական ու համայնական հասարակութիւնների ու նրանց ժողովների հետ միասին չը յիշեմ ստանիցանների ու խուտորների կազակ հասարակութիւնների ու նրանց հաւաքումների (сборъ) մասին, դա մի-միայն կարեութեան համար է, որպէսզի շատ անգամ չը կրկնեմ այն, ինչ որ ինքն ըստ ինքեան հասկանալի է:

Ընկերական հաստատութիւնները, իրանց կարգին լինում են երկու տեսակի — փոխատու-խնայողական և վարկային ընկերութիւններ:

Այսպէս ուրեմն, մանր վարկի նոր հաստատութիւնները լինում են երեք տեսակի. 1) զիւղական կամ համայնական (կազակների հողերի վրայ — ստանիցայական ու խուտորական) հասարակական փոխատու-խնայողական դրամարկղեր, 2) փոխատու-խնայողական ընկերութիւններ և 3) վարկային ընկերութիւններ:

Այդ տեսակներից իւրաքանչիւրի համար հաստատուած է առանձին կանոնադրութիւն և այդ երեք կանոնադրութիւններն էլ Կառավարիչ Սենատի կողմից յայտարարուած են Կառավարութեան օրէնսդրութիւնների ու տնօրինութիւնների Ժողովածուի մէջ (Собрание узаконений и распоряжений Правительства):

Այդ կանոնադրութիւնները ամեն մարդ, ով ուղղում է, կարող է ծրի ստանալ Պետական Բանկի որևէ բաժանմունքում կամ մանր վարկի հաստատութեան տեսչի մօտ (инспекторъ мелкаго кредита), որ գտնուում է նոյն բաժանմունքում: Պոստով ստանալու համար, բաւական է այդ տեսչին ուղարկել իւրաքանչիւր օրինակելի կանոնադրութեան (образцовый уставъ) համար 2 կապէկանոց նամակադրոշմ: Բացի այդ, մանր վարկի գործերի վարչութիւնը հրատարակել է վարկային ընկերական հաստատութիւնների երկու օրինակելի կանոնադրութիւնները, տալով առանձին չօդուածներին կից մանրամասն բացատրութիւններ: Այդ հրատարակութիւնը նոյնպէս կարելի է ստանալ ծրի, միայն պոստով ուղարկելու համար պահանջուում է 8 կոպէկանոց նամակադրոշմ: Թէև այդ բացատրութիւնները վերաբերում են զլխաւորապէս մանր վարկի ընկերական հաստատութիւնների կանոնադրութիւններին, բայց այն բոլորը, ինչ որ այնտեղ ասուած է — փոխառութիւններ տալու, աւանդներ ընդունելու, փոխառութիւններ կատարելու մասին, վարկային հաստատութիւնների միջնորդութեան և, վերջապէս, դանազան տեսակի զրամադրութիւնների (հիմնական, պահեստի [запасной], յատուկ [спеціальный] կամ որոշ նպատակով [съ особымъ назначением] տուած զրամադրութիւնների) մասին — այդ բոլորը հաւասար չափով գործադրելի է նաև դասակարգային հասարակական զրամարկղերի նկատմամբ:

Իսկապէս ասած, մանր վարկի բոլոր հաստատութիւնները կատարում են միեւնոյն բանը և միեւնոյն նպատակով — տալիս են փոխառութիւններ. զրա համար նորա ընդունում են աւանդներ և առհասարակ իրանք փոխ են վերցնում, որտեղից որ կարող են, զրամ ու մատուցանում են իրանց մասնակցողներին ամեն տեսակ ծառայութիւններ՝ յարմարութիւն տալով զնելու կամ վաճառելու հարկաւոր առարկաներ, և այդ բոլորի համար բոլոր հաստատութիւնները ունեն համարեա միատեսակ կանոններ: Տարբերութիւնը նրանց մէջ այն է, թէ նրանք ի՞նչպէս են կառավարւում, ի՞նչպէս, ի՞նչ հիմունքներով, ի՞նչ հաշիւներով հաստատութեան մասնակիցները պատասխանատու են նրա գործերի համար: Որպէս զի ընտրել, թէ այդ հաստատութիւններից

որը բաց անել — վարկային ընկերութիւն, փոխառութիւնայողական ընկերութիւն, թէ հասարակական (զիւղական կամ համայնական) փոխառութիւնայողական զրամարկղը, պէտք է ըմբռնել գործի հէնց այդ կողմը: Եւ զրանով էլ մենք այժմ կ'զբաղուենք:

Հասարակական զրամարկղը, ինչպէս անունն էլ ցոյց է տալիս, հասարակական գործ է. նա կառավարւում է մօտաւորապէս այնպէս, ինչպէս առհասարակ բոլոր շինական ու հասարակական գործերը: Եթէ զրամարկղը բացւում է զիւղում, ապա նրա տէրը լինում է զիւղի հասարակութիւնը, շէնը, զիւղական Ժողովը. եթէ բացւում է համայնքի համար — ապա համայնական Ժողովը, որ, ինչպէս յայտնի է, բաղկացած է ընտրեալներից. եթէ բացւում է ստանիցայի համար, ապա նրա տէրը ստանիցայի Ժողովն է:

Կարող են մի քանի՝ նոյն իսկ զանազան համայնքների զիւղական հասարակութիւններ և մինչև իսկ երկու, երեք համայնքներ իրանց մէջ համաձայնութիւն կայացնել ու միասին բաց անել մի զրամարկղ: Այն ժամանակ զրամարկղը կառավարւում է բոլոր հասարակութիւնների միացեալ Ժողովի կողմից, որին փոխարինել կարող է ընտրեալ լիազօրների Ժողովը, բաղկացած 30-ից մինչև 100 մարդուց: Այդպիսի փոխարինութիւն կարող է կատարուել կամ զիւղացիների սեպհական ցանկութեամբ կամ՝ անպայման պէտք է կատարուի — երբ մասնակցողների թիւը 300 մարդուց աւելի է:

Կազակների հողերի վրայ, ինչպէս յայտնի է, ստանիցայական Ժողովը, (սբօրը), ինքն ըստ ինքեան բաղկացած է ընտրեալներից:

Դրամարկղ բանալու համար հարկաւոր է, որ այդ մասին վճիռ կայացնի հասարակական կամ կազակների հասարակական Ժողովում կամ կազակների Ժողովում ծախն ունեցողների երկու երրորդ մասը: Եթէ զրամարկղ հիմնելու գործում մասնակցում են մի քանի հասարակութիւններ, ապա այդպիսի վճիռ պէտք է կայացնի իւրաքանչիւր հասարակութիւն առանձին-առանձին:

Ինչպէս ասացինք զրամարկղի տէրը հանդիսանում է հասարակութիւնը ու նրա Ժողովը. Ժողովը տալիս է զլխաւոր ցուցմունքներ այն մասին, թէ ինչ կարողով ինչ պէտք է անել. ինչքան տոկոս վերցնել փոխառութիւնների, ինչքան վճարել աւանդների ու փոխառութիւնների համար. վերցնել, արդեօք, զրամ ուրիշ տեղից, թէ՞ բաւականա՞նալ զրամարկղի հիմք ծառայող համայնական զրամադրութիւն. պահանջել փոխառուներից երաշխաւոր կամ զրաւական, թէ ոչ, և եթէ պահանջել, ապա ի՞նչ դէպքերում և այլն, և այլն: Բայց, իսկապէս, զրամարկղի

գործերը վարում է ժողովից ընտրուած վարչութիւնը. նա որոշում է թէ ում կարելի է փոխ տալ ու ինչքան, իսկ ում — չի կարելի. ինչքան ու ինչպէս գնահատել զբաւականք, ընդունել այս ինչի երաշխաւորութիւնը, թէ նրա երաշխաւորութիւնը ոչինչ համարել: Վարչութիւնը աշխատում է հարկաւոր դէպքում, զբաւարկող համար փող ճարել, կատարելով, 'ի հարկէ, այն բոլոր ցուցմունքները, որ տուել է ժողովը: Եթէ զանազան շրջառութիւնների համար (օրինակ ապրանք գնելու կամ վաճառելու) հարկաւոր է կանոններ հրատարակել, վարչութիւնը մշակում է ու առաջարկում 'ի հաստատութիւն ժողովի:

Վարչութեան գործունէութեան, հաշիւների, փողերի ու հասարակական զբաւարկողում գտնուած առհասարակ ամեն տեսակ գոյքերի վեջստուգման համար ընտրւում են հաշուետեմներ, իսկ եթէ զբաւարկող շրջառութիւնները շատանում ու բարդանում են, այն ժամանակ ժողովը կարող է հիմնել առանձին խորհուրդ:

Վարչութեան մէջ պէտք է լինի երեք անդամ: Բայց ժողովը կարող է ընտրել աւելի, թէկուզ մի-մի մարդ ամեն մի զիւղից: Բայց պէտք է աչքի առաջ ունենալ, որ եթէ վարչութիւնը բաղկացած լինի չափազանց շատ մարդկանցից, նա կը լինի ծանրաշարժ. դժուար կը լինի յանձն հաւաքուել, մինչդեռ հարկաւոր կը լինի, որ վարչութիւնը՝ վճարներ տալու, փող ընդունելու համար, ժողովուրդի, գանուրի իւր տեղում, կարելոյն չափ, յանձն (շաբաթը մի անգամից ոչ պակաս). այդ պատճառով գոյցէ աւելի յարմար կը լինի ընտրել սովորական վարչութիւն, բաղկացած երեք անդամից, բայց զրա փոխարէն ունենալ նաև խորհուրդ, բաղկացած թէկուզ 5—10 անդամից (օրինակ, իւրաքանչիւր հասարակութիւնից մէկ-մէկ, կամ երկու-երկու), որովհետեւ բաւական է, որ խորհուրդը հաւաքուի ամիսը մի անգամից ոչ աւելի: Այդ խորհրդին կարելի է յանձնել, 'ի միջի ալլոց, որոշելու ամեն մի մասնակցողի համար փոխառութեան ամենաբարձր չափը, որից աւելի նրան տալ չի կարելի. այն ժամանակ վարչութիւնը այդ չափի սահմաններում կարող է զբաւ փոխ տալ՝ ամեն մէկի կարիքի համաձայն, նայած թէ նա ինչի համար է վերցնում, ինչ պայմանաժամով, ով ունի երաշխաւոր, ի նկատի ունենալով նոյնպէս, թէ ինչքան ազատ զբաւ կայ զբաւարկողում: Խորհրդի պարտականութիւնը կը լինի նաև մշտապէս հսկել վարչութեան վրայ և կատարել զանազան գործեր, որ կարող է յանձնել նրան ժողովը:

Յետոյ ամենազիւսաւորն այն է, որ զբաւարկող հիմնող հասարակութիւնը պատասխանատու է նրա համար: Ինքն ըստ ինքեան հասկա-

նալի է, որ եթէ հասարակութիւնը բաց է անում զբաւարկող միայն իւր սեպական համայնական զբաւազլիսով և ոչ մի տեղից ու ոչ դէից իւր շրջառութիւնների համար փող չի վերցնում և չի էլ մտածում վերցնել, ապա նա ոչնչի համար էլ պատասխանատու չէ: Եթէ այդպիսի զբաւարկող վարչութիւնը 'ի զուր տեղը բաժանի համայնական զբաւազլուիւր և եթէ այդ զբաւազլուիւր կորչի — զբաւով էլ զործը կը վերջանայ. հասարակութիւնը կը տուժի միայն համայնական զբաւազլիսով: Բայց եթէ հասարակութիւնը գործադրում է զբաւարկող ընդունում աւանդները կամ թէ՛ մասնաւոր մարդու կամ բանկից պարտք վերցրած փողերը, այն ժամանակ հասարակութիւնը պատասխանատու է աւանդատիրոջ կամ պարտատիրոջ առաջ. և պատասխանատու են, ինչպէս, 'ի հարկէ ամեն մի հասարակական զործում, բոլորը — ով ցանկացել է զբաւարկող ունենալ, ով չի ցանկացել, ով օգտուել է զբաւարկողից, այսինքն՝ փոխառութիւն է ստացել, կամ ով չի օգտուել. հասարակական զբաւարկողի համար պատասխանատու են զիւղական կամ համայնական հասարակութեան բոլոր անդամները հաւասարապէս ու փոխադարձ երաշխաւորութեամբ:

Ընկերութիւնը կազմւում է միայն այն մարդկանցից, որոնք իրանք ցանկանում են մասնակցել այդ գործին:

Գործի տէրը հանդիսանում է ընկերների ընդհանուր ժողովը, որը՝ հասարակութեան ժողովի նման, նոյնպէս տալիս է ընդհանուր ցուցմունքներ կամ, եթէ հարկաւոր է, սահմանում է մանրամասն կանոններ. իսկ զործը կառավարում է ընդհանուր ժողովի կողմից ընտրուած վարչութիւնը: Բայց այդ ընտրւում է նաև խորհուրդ, որը հսկում է վարչութեան վերայ, ստուգում է հաշիւները և կատարում է արիւղ զանազան պարտականութիւններ, որ ժողովը կարող է նրա վրայ դնել: Խորհուրդը ընդունում է նոր ընկերներ, նշանակում է նրանց համար վարկ, այսինքն՝ որոշում է փոխառութեան ամենամեծ չափը, մինչև որքան կարելի է տալ իւրաքանչիւրին, և այլն:

Ընկերութեան իւրաքանչիւր նոր անդամ, միւս ընկերների հետ, փոխադարձ երաշխաւորութեամբ, իւր կամքով, իւր վրայ պատասխանատուութիւն է առնում ընկերութեան գործերի ու պարտաւորութիւնների համար. բայց այդ պատասխանատուութիւնը ամենքի համար հաւասար չէ և համապատասխանում է վարկին. ում մեծ վարկ է բացւած, այսինքն՝ ով հնարաւորութիւն ունի աւելի օգտուել ընկերութեան ծառայութիւնից, նա էլ աւելի պատասխանատու է, ում փոքր

վարկ է բացուած նա էլ, ըստ այնմ, քիչ գումարի պատասխանատուութիւն է յանձն առնուած:

Վարկային ու փոխատու-խնայողական ընկերութիւնների մէջ եղած տարբերութիւնը հետեւեալն է: Վարկային ընկերութիւնը պէտք է սկզբից, հէնց որ բացուած է, ունենայ իւր պատրաստի հիմնական դրամադրութիւնը: Այդ դրամադրութիւնը կարող է մէկի կողմից նուիրուած կամ ընծայուած լինել, որ, ի հարկէ, քիչ է պատահում. կամ այդ դրամադրութիւնը կարող է փոխ առնուած լինել: Հիմնական դրամադրութիւն փոխ առնող է զեմստիօն, զիւղական կամ համայնական հասարակութիւնը, նոյնպէս և Պետական Բանկը: Փոխատու-խնայողական ընկերութիւնների մէջ հիմնական դրամադրութիւնը կազմուած է իրանց ընկերների բաժիններից՝ փայերից: Ամբողջ բաժինը բոլորի համար միեւնոյն է, և նրա քանակութիւնը որոշուած է ընկերութիւնը, սկզբում, բացուելու ժամանակ. այդ քանակութիւնը որոշուած են, ի հարկէ, ընկերութեան հիմնադիրները, բայց յետոյ ընդհանուր ժողովը կարող է բաժինը փոփոխութեան ենթարկել: Բայց բաժինը մտցուած է ոչ միանգամից, այլ կամաց-կամաց, այն չափով, որը որոշուած է նոյնպէս ընկերութիւնը: Յամենայն դէպս, փոխատու-խնայողական ընկերութիւնների մէջ՝ բաժիններ կազմելու համար անդամավճարներ պարտաւորեցուցիչ են:

Փոխատու-խնայողական ընկերութիւնները մեղանում գոյութիւն ունեն շատ վաղուց. նրանցից շատերը բարգաւաճում են, կատարում են մեծ շրջառութիւններ և այժմ իսկ շատ մեծ օգուտներ են տալիս բնակչութեան այնտեղ, որտեղ նոքա գործում են: Բայց նրանց մեծամասնութեան գործերը վատ են գնում. շատերը բոլորովին քայքայուել են և բացի վնասից, ոչինչ չեն բերել իրանց հիմնադիրներին: Եւ այնտեղ, որտեղ այդ տեսակի ընկերութիւնները վատ են վերջացել, նրանց դէմ շրջակայքում կազմուել է նախապաշարմունք. առանձնապէս աւելի են բաժինները, երբեմն մինչև իսկ այնտեղ, որտեղ ընկերութեան գործերը լաւ են գնում: Սակայն փոխատու-խնայողական ընկերութիւնների անշաղջութեան պատճառը բոլորովին բաժինները չեն, այլ այն, որ այն մարդիկ, յանձն շատ լաւ մարդիկ, որոնք մեռնարկել են ընկերութիւն հիմնելու, չեն կարողացել ինչպէս հարկն է, վարել գործը. ընկերութեան վրայ ոչ մի հսկողութիւն չի եղել, չի եղել մէկը, որ կարողանար ժամանակին արգելել ընկերներին՝ ի չարը գործ գնելու ընկերութեան փոխատուութիւնները. ոչ ոք քաջութիւն ու հմտութիւն չի ունեցել ստիպելու փոխառուներին, այսինքն՝ իրանց ընկերներին, լինել ճշտապահ ժամանակի ընթացքում պարտքերը դարձել են անյուսալի,

և խեղճ պահեստատուները կորցրել են իրանց բոլոր պահեստադրամները, կամ նրանց մեծ մասը: Բաժիններն այստեղ, իսկապէս, բոլորովին մեղաւոր չեն: Եթէ մեղանում խիստ չեն սիրում բաժիններն ու բաժնեկան ընկերութիւնները, դրա պատճառը ոչ թէ բաժիններն են, այլ 1) նրանց կազմելու եղանակը՝ հին կանոնադրութիւնների համաձայն և 2) այն, որ ընկերութեան մէջ փոխատուութիւնները կախուած են եղել բաժնի քանակութիւնից. եթէ բաժինը մեծ է եղել, կարելի է եղել ստանալ մեծ փոխատուութիւն, եթէ փոքր է եղել — փոխատուութիւն էլ՝ չնչին: Դրանից դուրս է եկել այն, որ երբ մէկը մտնելիս է եղել ընկերութեան մէջ, նրան հարկաւոր է եղել բաւականին մեծ բաժին. բայց որովհետեւ, ինչպէս ինքն ըստ ինքեան հասկանալի է, նոր ընկերը փող չի ունեցել, ապա նրա անուշով զրբերում զրբել են այնպիսի մի բաժին, որ նա իսկապէս չի մտցրել, այլ միայն հանել են նրան տուած առաջին փոխատուութիւնից: Գրել են փոխատուութիւն 100 ռուբլի, բայց դրանից հանել են 50 ռուբլի իբրեւ բաժին, իսկ տոկոսներ վերցրել են ամբողջ 100 ռուբլուց: Հասկանալի բան է, որ 100 ռուբլի պարտքը, որ անդորրադրով (расписка) ստացած է համարում, փոխառուն երբէք վճարել չի կարող. ահա և սկսուած է զրապրութիւն, «փոխադրութիւն» պարտքի մի պայմանաժամից միւսը և այսպէս անվերջ:

Նոր կանոնադրութեամբ այդպիսի բան չ'պէտք է և չի կարող տեղի ունենալ: Ենթադրենք, նշանակուած է ընկերութեան բաժինը 10 ռուբլի, իսկ բաժնեվճարը տարեկան 1 ռուբլի, կամ թէ ամսական 10 կոպէկ: Ամսական 10 կոպէկ! դա իւրաքանչիւր մուրացկան կարող է յետ ձգել, ամեն մի 10 տարեկան աղջիկ, որ բանջարանոցում քաղհանի համար օրեկան աւելի է ստանում — կարող է վճարել: Ուրեմն այդպիսի բաժինը ոչ ոքի՝ ընկերութեան մէջ մտնելու համար, ծանրութիւն պատճառել չի կարող, ոչ ոքի աւելորդ պարտքի մէջ չի ձգի, այլ միայն կը դրդի մարդու անելու թէկուզ փոքրիկ խնայողութիւն: Բայց միևնոյն ժամանակ այդ բաժինները, կամ, աւելի ուղիղ, պայմանաժամով նշանակուած բաժնեվճարները, ինչքան էլ նրանք քիչ լինեն, ստացուելով շատ մարդկանցից, բոլոր ընկերներից, չափազանց հեշտացնում են ընկերութեան գործը, որովհետեւ ընկերութիւնը շատ շուտ հաւաքում է իւր սեպհական հիմնական դրամադրութիւնը:

Սակայն, միմիայն բաժնեվճարներից բաւականաչափ դրամադրութիւն կը կազմուի, այնուամենայնիւ, միայն ժամանակի ընթացքում: Այդ պատճառով փոխատու-խնայողական ընկերութիւնը նոյնպէս չի կարող սկը-

սել դործը, եթէ չստանայ հիմնական զրամագլխի համար ուրիշ տեղից որեւէ գումար, որ կարող է նրան տրուել կամ իբր նուիրատուութիւն, ընծայ, կամ թէ իբր փոխառութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս վարկային ընկերութեան մէջ: Այդպիսի փոխառութիւն կարելի է ստանալ, 'ի միջի ալոց, մանր վարկի գործերի վարչութիւնից, որ գտնուում է Պետական Բանկին կից:

Վերջ 'ի վերջոյ՝ թէ վարկային ընկերութիւն և թէ փոխառութիւնայողական ընկերութիւն բաց անելու համար անհրաժեշտ է Պետական Բանկից հիմնական զրամագլխի համար փոխառութիւն խրնդրել *): Թէ մէկ և թէ միւս ընկերութիւնը կառավարուում են միատեսակ, օգտուում են միեւնոյն իրաւունքներով և իրանց ընկերների հետ կատարում են միեւնոյն շրջառութիւնները. տարբերութիւնը միայն նրանումն է, որ վարկային ընկերութիւնը չի պահանջում պարտաւորեցուցիչ անդամավճարներ կամ խնայողութիւններ, իսկ փոխառութիւնայողական ընկերութիւնների մէջ — ընկերները կանոնադրութեան համաձայն պարտաւոր են մտցնել, իրանց ոչժերի համաձայն, պայմանաժամով նշանակուած անդամավճարներ, մինչև որ կազմուի որոշ բաժին: Այդ բաժնի վրայ տարուայ վերջը հաշուում են նոյնպէս արդիւնքը, եթէ միայն այդ տարի ընկերութիւնը օգուտ ունեցել է: Բանի զեռ բաժինը լրիւ է, — արդիւնքը միայն հաշուում են, իսկ երբ լրիւ է դառնում — արդիւնք տալիս են բաժնետիրոջը:

Ահաւաստիկ, թող ընկերութիւն հիմնել ցանկացողները իրանք մրտաձեն, թէ որն է օգտակար — որ իւրաքանչիւր ընկեր պարտաւոր լինի, թէկուզ մի քիչ, խնայել, հաւաքել զրամ և ծանր են, արդեօք, նրա համար այդ՝ թէև փոքր, բայց պարտաւորեցուցիչ անդամավճարները, թէ՛ խնայողութիւններ հաւաքելը պէտք է թողնել ամեն մէկի ազատ կամքին: Առաջին դէպքում հիմնում են փոխառութիւնայողական, իսկ երկրորդ դէպքում՝ վարկային ընկերութիւն:

Զի խանդարում աչքի առաջ ունենալ նաև հետևեալ հանդամանքը:

*) Իսկապէս ասած, հիմնական զրամագլխի համար ընկերութիւններին փոխառութիւններ տրուում են զանազան աղբիւրներից. վարկային ընկերութիւններին — իսկապէս Պետական Բանկից, իսկ փոխառութիւնայողական ընկերութիւններին — այն առանձին միջոցներից, որ Վանձարանը բաց է թողնում մանր վարկի գործերի վարչութեան: Բայց ընկերութիւն հիմնողների համար դա բոլորովին միևնոյն է, որովհետև թէ այս և թէ այն դէպքում հարկաւոր է գործ ունենալ ու բանակցութեան մէջ մտնել մանր վարկի գործերի վարչութեան հետ՝ կամ բանկի տեղական բաժանմունքի միջոցով, կամ մանր վարկի տեսչի միջոցով, որ գտնուում է Բանկի բաժանմունքում:



Մայրաքաղաքի դէպքում, եթէ ընկերութիւնը մի փոքր կամ մի քիչ փնտր հարկաւոր լինի բաժանել ընկերների մէջ (եթէ դործը փոքր ի շատէ լաւ տարուի և եթէ ընկերները հսկեն գործի վրայ — այդպիսի բան, 'ի հարկէ, չի կարելի սպասել. բայց այնուամենայնիւ, զրգբախտութիւն կարող է պատահել), այդ դէպքում վարկային ընկերութեան ընկերները ստիպուած են զոնէ մի քիչ իրանց զրպանից վճարել, իսկ փոխառութիւնայողական ընկերութեան մէջ՝ փնտր ամենից առաջ զեղջուում է բաժնից, այնպէս որ, թէև իւրաքանչիւր ընկեր վճարում է փող, բայց, իսկապէս, հարկաւոր չի լինում նրանից պահանջել ու նրա զրպանից հանել:

Վերևը՝ խօսելով վարկային ու փոխառութիւնայողական ընկերութիւնների առանձնապատկութիւնների մասին, ես երկար կանդ առայ հիմնական զրամագլխի վրայ, որ նրանք պէտք է ունենան, և ասացի, թէ նա ինչպէս է կազմուած: Անհրաժեշտ է յիշել, որ հասարակական փոխառութիւնայողական զրամարկղի համար նոյնպէս պահանջուում է սկզբնական հիմնական զրամագլուխ: Այդ սկզբնական զրամագլխից զրամարկղը սկսում է փոխառութիւններին փող տալ, և նա ծառայում է իբր ապահովութիւն ապագայ շրջառութիւնների համար:

Հասարակութիւնը կարող է զրամարկղին տալ հիմնական զրամագլուխ համայնական սեպհական միջոցներից. բայց այդ դէպքում արդէն, քանի որ զրամարկղը գոյութիւն ունի, այդ զրամագլուխը չի կարելի վերցնել ուրիշ որեւէ գործի համար. կամ թէ՛ հիմնական զրամագլուխը կարող է փոխ ստացուել մասնաւոր մարդուց, զեմստօլից, մանր վարկի գործերի վարչութիւնից *)՝ նոյն հիմունքներով, ինչպէս ընկերական վարկային հաստատութիւնների մէջ: Կարելի է, վերջապէս, հասարակական համայնական միջոցները տալ զրամարկղին հիմնական զրամագլխի համար՝ ոչ բոլորովին, այլ միայն փոխ, որոշ պայմաններով և շատ կամ քիչ ժամանակով:

Վերևը մենք բացատրեցինք, թէ ինչու մէկ գործի էութիւնը հասարակական զրամարկղերի, վարկային ու փոխառութիւնայողական ընկերութիւնների մէջ: Բայց հարկաւոր է յիշել մի ուրիշ հանդամանքի մասին, որով հասարակական զրամարկղը տարբերուում է ընկերութիւն-

*) Մանր վարկի գործերի վարչութեան տրամադրութեան տակ կայ առանձին բարեգործական զրամագլուխ, որից՝ հիմնական զրամագլխի համար՝ հասարակական փոխառութիւնայողական զրամարկղերին տրուում է 40/0-ով: Մանր վարկի միւս բոլոր հաստատութիւնները, 'ի թիւս որոց և կազմակերպիչ զաւակարգային-հասարակական զրամարկղերը, կարող են ստանալ միայն 60/0-ով:

ներից. այդ այն է, որ հասարակական դրամարկից փոխատուութիւններով կամ այլ տեսակի ծառայութիւններով կարող են օգտուել հասարակութեան բոլոր անդամները, այսինքն գիւղացիները, և միայն գիւղական ու համայնական հասարակութեան անդամները, իսկ գիւղում ապրող, բայց ուրիշ դասակարգի պատկանողները, օրինակ՝ մեշաները (мѣщане), քաղաքներում վերադրւած արհեստաւորները (приписанные къ городамъ ремесленники), հոգեւոր կոչում ունեցողները, մանր կալուածատէրերը (мелкопомѣстные) և այլն, եթէ մինչև իսկ նրանք մշտապէս գիւղում ապրելիս լինեն, իրաւունք չ'ունեն դիմելու դրամարկին: Ընկերութեան ծառայութիւններից կարող են օգտուել միմիայն ընկերները, բայց, դրա փոխարէն, ընկերութեան մէջ կարող է մտնել ամեն մի բարեյոյս մարդ, միայն թէ նա ունենայ իւր մշտական բնակչութեան տեղը և իւր որոշ անտեսութիւնը այն շրջանում, որի վրայ տարածւած է ընկերութեան գործունէութիւնը:

Այժմ ես պարտաւոր եմ անցնել այն հարցին, թէ ինչպէս, իսկապէս, ձեռնարկել գործին, որպէսզի բաց անել մանր վարկի հաստատութիւն:

Բայց այդ մասին զխաւորն արդէն ասուած է. — եթէ մարդիկ ուզում են հիմնել հասարակական գիւղացիական դասակարգային դրամարկը, նրանք պէտք է այդ մասին վճիռ կայացնեն ու այդ վճիռն ուղարկեն զեմստօյի զխաւորին (земскій начальникъ). եթէ ուզում են հիմնել վարկային կամ փոխատու-խնայողական ընկերութիւն, հարկաւոր է միայն, որ մի քանի մարդ միանան, համաձայնութեան դան (հարկաւոր է, որ, եթէ հնարաւոր է, լինի 20 մարդ), խնդիր դրեն մանր վարկի գործերի վերաբերեալ նահանգական (կամ շրջանային) յանձնաժողովին ու խնդիրն ուղարկեն կամ այդ յանձնաժողովը, կամ Պետական Բանկի մօտակայ բաժանմունքը (միւսն ոչ է՝ նոյն, թէ հարեւան նահանգի):

Ես մանրամասն չեմ նկարագրի, թէ ինչպէս պէտք է վճիռ կայացնել, թէ ինչ պէտք է անպայման չիշել վճռի կամ խնդրի մէջ և այլն: Միայն գրելով — ամեն ինչ չես ասի. աւելի պարզ. ում որ հարկաւոր է, կարող է զիմել կամ զեմստօյի նաչալ'նիկին, կամ Բանկի բաժանմունքը:

Զեմստօյի զխաւորը կարող է տալ հասարակական դրամարկի վերաբերեալ ամեն տեսակ հարկաւոր ցուցմունքներ ու կանոնադրութիւններ, իսկ Բանկի բաժանմունքը կ'ուղարկի կանոնադրութիւններ, ինչ տեսակ որ հարկաւոր է, ու հրահանգներ, թէ ինչպէս գրել, ուր

ուղարկել թղթերը և մինչև իսկ կ'ուղարկի ընկերութիւն հիմնելու համար տրուելիք խնդիրների պատրաստի, տպած — բլանկներ: Իսկ տեսուչը կը տայ նաև բանաւոր ամեն տեսակ բացատրութիւններ:

Ճիշտ նոյնպէս ես մտադիր չեմ կանգ առնելու վարկային հաստատութիւնների օպերացիաների (կամ գործողութիւնների) մանրամասնութիւնների վրայ: Այդ բոլորը բացատրուած է մանր վարկի գործերի վարչութեան այն հրատարակութեան մէջ, որի մասին ես վերևը չիշեցի, և այն ամենին, ով ուզում է ընկերութիւն կամ հասարակական դրամարկը հիմնել, ես խորհուրդ եմ տալիս՝ կամ կարգալ այդ գրքոյը, կամ մի լաւ խօսել մանր վարկի տեսչի, կամ մի այլ գործին տեղեակ մարդու հետ:

Բաց անել դրամարկը կամ ընկերութիւն և խնդրել վարչութիւնից հիմնական դրամադուլս — դժուար չէ. հարկաւոր է միայն կայացնել հասարակական վճիռ, կամ գրել տպած բլանկի վրայ խնդիր ու ուղարկել ուր որ հարկաւոր է — և ուրիշ ոչինչ: Բայց, որպէսզի գործ սկսել ոչ 'ի դուր տեղը, այլ խելացի կերպով, հարկաւոր է ծանօթանալ բոլոր կանոնադրութիւնների ու այն ամենի հետ, ինչ որ վերաբերում է գործին:

Ձր մտնելով, այսպիսով, մանրամասնութիւնների մէջ, ես, այնուամենայնիւ, օգտակար կը համարեմ մի քանի խօսք ասել երկու ամենակարեւոր բանի մասին. նախ՝ թէ ինչպէս մանր վարկի հաստատութիւններից փոխատուութիւններ տալ, և երկրորդ՝ թէ ինչպէս և որտեղից այդ փոխատուութիւնների համար փող ձարել:

Բոլոր վարկային հաստատութիւնների զխաւորը նպատակն է, ինչպէս ինքն ըստ ինքեան հասկանալի է, մասնակցողներին հնարաւորութիւն տալ դրամ փոխ վերցնելու:

Սակայն փոխատուութիւններ տրուում են միմիայն անտեսական շրջառութիւնների համար և այն էլ՝ բոլոր կանոնադրութիւնները միակերպ պահանջում են, որ փոխառուն նախօրօք ասի, թէ ինչի համար է նա իսկապէս վերցնում փոխատուութիւն:

Փոխատուութիւնը միայն այն ժամանակ է լինում օգտակար, երբ նա ծախսուում է այնպիսի գործի վրայ, որը փոխառուին օգուտ է բերում ու շատացնում է նրա կարողութիւնը: Եթէ մէկը ապրուստի միջոց չ'ունի, եթէ նա ուզում է ծախսել մի փոքր իւր, կամ իւր ընտանիքի, թէկուզ ամենաանհրաժեշտ պէտքերի համար, բայց մի քիչ աւելի փոխատուութիւնը նրան ոչ միայն չի օգնի, այլ և շատ դէպքերում նրան կը ծառայի ուղղակի ի վնաս, որովհետեւ նա, ծախսելով

փոխատուութիւնը, գորանով նա չի հարստանալ, իսկ փոխատուութիւնը նա ստիպուած կը լինի վերադարձնել ոչ թէ իւր օգուտից, ոչ թէ արդիւնքից, այլ ուղղակի իւր վերջին, ամենաանհրաժեշտ գոյքի գնով: Եւ քանի որ փոխատուութիւնը փոխառուի համար ոչ թէ բարիք է, այլ իսկական քայքայումն:

Այդ պատճառով եթէ փոխառուից պահանջուած է, որ նա ինքն իրան հաշիւ տալ և ընկերութեան կամ դրամարկղի վարչութեանը յայտնի, թէ նա ինչ բանի համար է վերցնում փոխատուութիւն, դա փոխառուի համար աւելորդ նեղութիւն չէ. դա այնպիսի մի միջոց է, որ շատերին կարող է յետ կանգնեցնել գալթակողութիւնից՝ ծախսելու հեշտութեամբ ձեռք բերուած փողերը, առանց մտածելու, թէ ինչպէս յետոյ նա պէտք է հաշիւները մաքրի:

Փոխատուութիւն տրուած է սովորական տնտեսական շրջառութեան համար, այնքան ժամանակով, որքան որ պահանջուած է այդ շրջառութիւնը:

Եթէ, օրինակ, մէկը վերցնում է փող Յուլիսին, Օգոստոսին, որպէս զի ստանալ իւր ցորենը, որ զիջած գտնուած է կապալով վերցրած հողի վրայ, բաւական է վերցնել մինչև Նոյեմբեր, Դեկտեմբեր, որպէս զի առանց շտապելու ծախի ցորենի մի մասը ու վերադարձնի փողերը: Աշնանացանի համար հողը սովորաբար կապալով վերցնում են ամառը, Յուլիսին, կարող է պատահել, մինչև իսկ Մայիս ամսին. դրաւական վճարելու համար հարկաւոր է փոխատուութիւն վերցնել մի ամբողջ տարի ժամանակով, և այն էլ աչքի առաջ ունենալով միայն, որ յաջորդ տարուայ Ապրիլին կամ Մայիսին չի կարելի վճարել զարնանային որևէ աշխատանքից, կամ այն գումարից, որ կ'ստացուի՝ վաճառելով ամենաբարձր գնով յատկապէս այդ նպատակի համար պահած վարսակը: Սակայն, ծայրայեղ դէպքում, եթէ այդ էլ չը յաջողուի, կտրելի է նաև խնդրել յետաձգելու պարտքը մինչև աշուն, մինչև նոյն՝ կապալով վերցրած աշնանացան արտի հսկի հաւաքելը: Նիժնի-Նովգորոդի նահանգում, որտեղ ժողովուրդը պարապում է փականգործութեամբ (слесарными издѣліями), մի ընկերութիւն վճռել էր փոխատուութիւն տալ երկու շաբաթով, որովհետև վարպետը, գնելով փոխ վերցրած փողերով նիւթ, երկու շաբաթում կարող է և պարտաւոր է մի կերպ շուռ դալ, այսինքն՝ վաճառել պարտատու իրերը և վերադարձնել փողը. իսկ յետոյ նա, եթէ ուղում է, կարող է նիւթ գնելու համար նորից փոխ վերցնել: Լինում են այնպիսի հանգամանքներ (գլխաւորապէս, ասենք, քաղաքային, բայց ոչ գիւղական ընկերութիւնների

մէջ), երբ փոխառուն վերցնում է փողը միանգամից, բայց վճարում է քիչ-քիչ, ամեն շաբաթ: Միայն օրէնքով փոխատուութիւնների համար պայմանաժամ նշանակուած է, սովորաբար, մի տարի: Սովորական տնտեսական շրջառութիւնների համար մի տարուց աւելի փոխատուութիւններ տալ չի կարելի:

Սակայն առանձնակի կարիքների համար փոխատուութիւններ կարող են տրուել աւելի երկար ժամանակով. օրինակ՝ զիւղատնտեսութեան համար տաւար, զիւղատնտեսական գործիքներ (գութան, էրնելու մեքենայ, սալ և այլն) կամ արհեստաւորական արդիւնաբերութեան համար մեծ ու փոքր գործիքներ (приборы и инструменты) և այլն գնելու համար փոխատուութիւն տրուած է մինչև երեք տարի ժամանակով. իսկ զիւղատնտեսական բարելաւման կամ արհեստի ու արդիւնագործութեան մէջ կարգ ու սարք մտցնելու համար, տրուած է 5 տարի ժամանակով. օրինակ, հողի մշակումը՝ խոտ ցանկով բարելաւելու, եռամեայ սերմնափոխական տնտեսութիւնից (трехпольное хозяйство) բաղմամեայ տնտեսութեան անցնելու. ծաւարաղաց, ջրաղաց շինելու, դարբնանոց հիմնելու, ագարակը մի տեղից միւս, աւելի օգտաւէտ, տեղ փոխելու համար, փոխատուութիւն կարող է տրուել մինչև 5 տարի ժամանակով: Այս բոլոր դէպքերում փոխատուութիւնը վերադարձնելու համար նշանակուած է մի քանի պայմանաժամ՝ վճարելով հաւասարապէս կամ ուրիշ բաժանմամբ, որովհետև բոլոր նման տեսակի ծախսերը թէև շատացնում են փոխառուի արդիւնքը, բայց չեն կարող թափուել միանգամից, մի տարում:

Անցնենք միւս հարցին — թէ ինչ միջոցներից տալ փոխատուութիւններ: Դրա համար ամենից առաջ, ի հարկէ, ծառայում է հիմնական զրամադրութիւնը: Ես արդէն ասացի, որ այդ զրամադրութիւնը կարող է լինել սեպհական կամ փոխ առած, և որ մանր վարկի տմեն մի հաստատութիւն, թէ հասարակական, թէ ընկերական, կարող է այդ զրամադրութիւնը պարտք վերցնել մանր վարկի գործերի վարչութիւնից:

Վարչութիւնը այդ տեսակի փոխատուութիւններ տալիս է ամեն մի վարկալին հաստատութեան մօտ 1000—2000՝ բոլորը չափ, մասմաս վճարելու պայմանով. այնպէս որ առաջին տարիները ի հաշիւ պարտքի ոչինչ չի վճարում, այլ վճարում են միմիայն տոկոսները, իսկ յետոյ կամաց-կամաց վճարները մեծանում են և 13 տարուայ ընթացքում վճարում է ամբողջ պարտքը: Բայց վարկալին հաստատութիւնը, վճարելով պարտքը, պարտաւոր է նաև միաժամանակ իւր արդիւնքից հիմնական զրամադրութիւնը համար յետ ձգել ամենաքիչը նոյնքան,

որքան նա ամեն տարի վճարում է, այնպէս որ 13 տարուց յետոյ նա պէտք է ունենայ իւր սեպհական դրամադուլտը՝ ոչ պակաս քան այն, ինչքան որ նա փոխ էր վերցրել սկզբից:

Հիմնական դրամադուլտը, բացի այն, որ ծառայում է փոխառութեանը տալու համար, ունի նաև այն նշանակութիւնը, որ նա ապահովում է ապագայ փոխառութիւններն ու աւանդները: Այդ ապահովութիւնը կայանում է նրանում, որ եթէ դրամարկը կամ ընկերութիւնը մեծ վնասներ կրի ու դադարեցնի իր գործունէութիւնը, այն ժամանակ այն բոլորից, ինչ որ կարելի է առհասարակ ստանալ և փոխառուներից և ընկերներից, և՛ կամ գիւղական հասարակութիւնից, համաձայն փոխադարձ երաշխաւորութեան ամենից առաջ վճարում են աւանդներն ու փոխառութիւնները: Իսկ հիմնական դրամադուլտի համար գնում է այն, ինչ որ մնում է. այնպէս որ, եթէ վերջ ի վերջոյ ընկերութիւնից կամ գիւղական հասարակութիւնից չետ ստացուած փողերը չը բաւականացնեն աւանդատէրերին ու փոխառուներին, այն ժամանակ կորչում է ամենից առաջ հիմնական դրամադուլտը, իսկ եթէ վերջինս փոխ է առած, ապա վնաս է կրում նա, ով որ տուել է:

Հիմնական դրամադուլտը կարելի է փոխ վերցնել, ի հարկէ, բացի մանր վարկի գործերի վարչութիւնից, նաև ուրիշ տեղից. օրինակ, մի քանի զեմստօներ, որոնք ուղղում են նպատակ ու տարածել մանր վարկի հաստատութիւններ, փոխ են տալիս հիմնական դրամադուլտ: Իսկայէս վերև յիշուած բիսկը, թէ կարելի է կորցնել հիմնական դրամադուլտը, այնքան էլ մեծ չէ, որովհետև վարկային հաստատութիւնը, ամենավատ դէպքում անգամ, այնքան էլ հեշտ չի քայքայուի. այդ պատճառով մինչև անգամ մասնաւոր մարդիկ երբեմն չեն վախենում ընկերութիւն կամ հասարակական դրամարկը բանալու համար փոխ տալ հիմնական դրամադուլտ. նիշտ նոյնպէս գիւղական հասարակութիւնը, եթէ նա չի ուղղում հիմնել իւր սեպհական հասարակական դրամարկը, կարող է օգնել իրանց գիւղում կամ համայնքի մէջ ընկերութիւն կազմելու՝ նրան փոխառութիւն անելով հիմնական դրամադուլտի համար: Յերաւի. ինչո՞ւ չ'օգնել ընկերութեան՝ համայնական դրամադուլտով: Դրամադուլտը մի քանի տարուց յետոյ յետ կ'ստացուի, իսկ քանի որ փողերը գտնւում են ընկերութեան տրամադրութեան տակ, նա վնասում է հասարակութեան տոկոսներ: Իսկ եթէ գիւղում կը լինի հասարակական դրամարկը, թէ ընկերութիւն — հասարակութեան առանձին անդամների համար տարբերութիւնը, ըստ էութեան, այնքան էլ մեծ չէ: Ընկերութեան մէջ, ի հարկէ, ամեն մարդ մտնել

չի կարող. վատ տնտեսի (ХОЗЯИНЪ), զանցառու, տնքարեխիզն, խմող մարդու ընկերութեան մէջ չեն ընդունի. բայց հասարակական դրամարկից էլ (եթէ, հասկանալի բան է, գործը տարւում է խելացի կերպով, և ոչ թէ ի դուր տեղը ու խայտառակ կերպով) ամեն մարդու փոխ չեն տալիս. տալիս են միայն այն տեսակ փոխառուներին, որոնց՝ միեւնոյն է, եթէ ընկերութիւն լինելը, կ'ընդունէին ընկերութեան մէջ: Թէ ընկերութիւնը և թէ հասարակական դրամարկը լաւ մարդուն երբեք չեն մերժի փոխ տալու, եթէ միայն փող կայ: Ուրեմն բանը նրանում է, թէ ինչ է բացւած գիւղում — հասարակական դրամարկը, թէ ընկերութիւն — այլ նրանում, թէ նա, արդեօք, փող ունի՞. իսկ փող կարող է ունենալ ամեն մի վարկային հաստատութիւն, հասարակական թէ ընկերական, եթէ միայն նա փոխառութիւն է տալիս ոչ ի դուր տեղը, այլ խելացի կերպով ու ընտրութեամբ, տալիս է գործի համար, և ոչ թէ ապրուստի:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ՝ իւր շրջառութիւնների համար միմիայն հիմնական դրամադուլտով կարող է բաւականանալ այն հասարակական դրամարկը, որտեղ գիւղական հասարակութիւնը ունի մեծ համայնական դրամադուլտ. բայց այդ շատ քիչ է պատահում: Մեծ մասամբ ընկերութիւնը կամ դրամարկը պարտաւոր են՝ փոխառութիւններ տալու համար պարտքով փող հարել: Այդ փողը նոքա ձեռք են բերում կամ առաջարկելով տեղացի բնակիչներին աւանդներ տալու, կամ թէ ուղղակի մուրհակով պարտք են վերցնում հարուստ մարդկանցից, կամ Պետական Բանկից, կամ մասնաւոր բանկերից: Հէնց դրանում էլ, իսկայէս, այսինքն՝ փող ճարելու կարողութեան մէջ, կայանում է վարկային հաստատութեան ամբողջ իմաստն ու նպատակը:

Եթէ ամեն մէկը կարողանար հեշտութեամբ, թեթեւ տոկոսով, հարկաւոր եղած ժամանակ, փող պարտք վերցնել, այն ժամանակ բոլորովին հարկաւոր էլ չէր լինի ընկերութիւն բաց անել: Բանը նրանումն է, որ մի մարդու — քչերը կարող են հաւատալ: Օտար մարդ նրան բոլորովին չի հանաչում, իսկ իւր ծանօթ տեղացի հարուստը կ'աշխատի օգտուել իւր դրութիւնից, կը ճնշի նրան, այսինքն՝ կը նշանակի փոխառութեան այնպիսի պայմաններ, որ իւր համար ձեռնառու են, իսկ փոխառուի համար — ծանր: Այդ պատճառով մնում է միայն, որ բոլորեքեան, ովքեր իրանց տնտեսական շրջառութիւնների համար կարիք են զգում փողի, միանան, որպէս զի փող վնասումն ու ձեռք բերեն միասին, այսինքն՝ ընդհանուր պատասխանատւութեամբ, իսկ

յետոյ՝ իրանք էլ տնօրինեն այդ փողերը, փոխատուութիւն տալով այդ ընկերութեան մասնակցողներին, ում ինչքան հարկաւոր է:

Այդ պատասխանատուութեան մէջն է վարկային հաստատութեան ամբողջ ոյժը և այն բոլորը, ինչով որ նա պահւում է: Մի մարդու չեն հաւատալ, բայց մի քանի մարդու, միացած մէկ մէկու հետ — կը հաւատան ու փող կը տան: Ինչ որ մի մարդ մենակ չի կարող անել, հեշտութեամբ կարող են անել մի քանիսը միացած իրար հետ:

Եւ այդ բանի նկատմամբ՝ հասարակութիւնն ու ընկերութիւնը իրար նման են. զիւղական կամ համայնական հասարակութիւնը — այն մարդկանց պատրաստի դաշն է, որոնք վաղուց և եթ միացել են իրար հետ զանազան տնտեսական ու այլ նպատակների համար. այդ հասարակութեան ճիշտ նոյնպէս յարմար է վարել վարկային հաստատութեան գործերը, ինչպէս որ նա վարում է զանազան տնտեսական գործեր: Իսկ թէ փոխատու-խնայողական և թէ վարկային ընկերութիւնը մի դաշն է, որ կապւում է յատկապէս ու բացառապէս վարկային գործողութիւններ կատարելու համար:

Շատերը բոլորովին ՚ի գուր պնդում են, թէ զիւղում աւանդներ չեն տալիս, թէ զիւղացիք փողերը կամ թաղցնում են, կամ դնում են այնպիսի շրջառութիւնների մէջ, որոնք բերում են աւելի շատ օգուտ. այնպէս որ նրանք՝ որեւէ 5—6 կամ մինչև իսկ 8 տոկոսի համար ընկերութեան փող չեն տալիս: Որ զիւղում ազատ դրամ կայ, այդ ապացուցւում է նրանով, որ այնտեղ գոյութիւն ունեն վարկային հաստատութիւններ. այս վերջիններիս մեծ մասը շատ վաղուց չէ, որ դործում է և ունի, ինչպէս տեսանք, 6 միլիոնի աւանդներ ու փոխառութիւններ: Ճիշտ նոյնպէս և Պետական խնայողական դրամարկղը, որոնք գտնւում են պոստային բաժանմունքներին ու Լրկաթուղու կայարաններին կից, հաւաքում են շատ մեծ գումարներ, մեծ մասամբ զիւղերի բնակչութիւնից. եթէ ընկերութիւններն ու հասարակական դրամարկղերը կարողանային իրանց կողմը քաշել այդ գումարների թէկուզ կէսը, ապա նրանք բաւականին փող կ'ունենային: Եւ դործի ամբողջ էութիւնը աւելի շուտ նրանումն է, որ այդ ընկերութիւններին դեռ ևս չեն հաւատում, և պէտք է ամենից շատ աշխատել, որ նրանց հէնց իրանց տեղում հաւատային: Եթէ մէկը, վարկային հաստատութիւն հիմնելիս, յոյս է դնում Գանձարանի ու Պետական Բանկի վրայ, նա շատ սխալւում է: ՚ի հարկէ, Գանձարանն ու Բանկը սկզբում կ'օգնեն, փոխ կը տան և՛ հիմնական դրամադրութիւն, և՛, եթէ ուղում էր, շրջառութիւնների համար միջոցներ. բայց այդ բոլորը նախածեռնու-

թեան ու փորձի համար է: Իսկ եթէ այդպիսի հաստատութեան տեղական բնակիչները քիչ են հաւատում և մինչև իսկ փոքր գումարներ նրան չեն հաւատում, ապա ինչպէս հաւատան նրան Գանձարանն ու Բանկը: Զէ՛ որ Գանձարանն ու Բանկը նրանցից շատ հեռու են. նրանք վատ են տեսնում, թէ ինչ է կատարւում այդ տեսակ հաստատութեան մէջ. իսկ տեղացի մարդիկ շատ լաւ են տեսնում ու իմանում, թէ ում և ինչի համար են տրւում փողերը: Եթէ փողերը ընկնում են անյուսալի ձեռքեր առանց բաւականաչափ ընտրողութեան, կամ թէ ուղղակի շնորհիւ՝ ղեկավարների, վարչութեան կամ խորհրդի անդամների հետ ունեցած խնամիութեան, կամ թէ, որ աւելի վատթարն է, մաղարիչի պատճառով, այն ժամանակ, ՚ի հարկէ, այդպիսի ընկերութեան ոչ ոք իւր խնայած ու սև օրուայ համար չետ գցած բութիւն անդամ չի տալ. և դրանց նայելով՝ բանկը, ինչպէս ինքն ըստ ինքեան հասկանալի է, չի կարող վարկ բաց անել, այսինքն՝ ընկերութեանը՝ նրա շրջառութիւնների համար փող պարտք չի տալ:

Աւանդներ կարելի է ընդունել ոչ միայն ընկերութեան կամ դրամարկղի մասնակցողներից, այլ ամեն մարդուց, ով ուզենայ: Աւանդների պայմանները նշանակում է նախօրօք, մասամբ ընկերութիւնը կամ դրամարկղը (այսինքն՝ ժողովը, կամ, կազմակերպի հոգերի վրայ — «սօբոր»): Թէ ինչ պայմանով են ընդունւում աւանդները, ինչ տոկոս է վճարւում և թէ մինչև ինչ գումար կարելի է ընդունել — այդ բոլորը կախուած է ընկերութիւնից կամ հասարակութիւնից: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ընկերութեան կամ դրամարկղի խոհեմութիւնից է կախուած նշանակել աւանդներին աւելի ձեռնտու պայմաններ, որ նրանք փողը տան այդ վարկային հաստատութեան, և ոչ ուրիշին, կամ Պետական խնայողական դրամարկղին:

Վարկային հաստատութիւնը փող պարտք վերցնել կարող է ումից որ ուզենայ և այն պայմաններով, ինչպէս որ կ'ընդունի ընկերութեան կամ դրամարկղի ժողովը: Մանր վարկի հաստատութիւններին փող պարտք տալիս է նաև Պետական Բանկը:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Բանկը փող տալիս է այն պայմանով, որ ընկերութիւնը կամ դրամարկղը գործը տանեն այնպէս, ինչպէս որ հարկաւոր է՝ օրէնքի ու կանոնադրութեան համաձայն. իսկ այդ բանի նկատմամբ զիսաւորն այն է, որ փոխատուութիւնները տրին, իսկապէս, ինչպէս վերևն ասուած է, ընտրողութեամբ ու տնտեսական շրջառութիւնների համար, և որ փոխառուները, իսկապէս, իրանց ժամանակին պարտքը վերադարձնեն: Եթէ փոխառուները այդ բանը կա-

տարեն, այն ժամանակ ընկերութիւնն էլ (կամ դրամարկդը) իւր կարգին կարող էր լինի արդարանալ բանկի առաջ, որը կ'օգնէ նրանց նաև ապագայում և կը տայ նրանց կարելոյն չափ նոր միջոցներ:

Պետական Բանկը (կամ Բանկին կից գտնուող մանր վարկի գործերի վարչութիւնը), բանալով ընկերութեան կամ դրամարկդին վարկ, պարտաւոր է նաև հսկել նրանց վրայ:

Ես արդէն անցողակի կերպով ցոյց տուի, որ մանր վարկի հաստատութիւնների, գոնէ ընկերականների, նախկին անչառողութեան պատճառներից մէկը հէնց եղել է նրանց վրայ հսկողութեան բացակայութիւնը. չի եղել մէկը, որ ժամանակին կանգնեցնէր ընկերութեան անկանոն գործողութիւնները. իսկ ուրիշ դէպքերում էլ, երբ վարչութիւնը լուազոյն ցանկութիւններ է ունեցել գործը վարելու այնպէս, ինչպէս հարկաւոր է, նա չի կարողացել գործը կարգի բերել, խառնուել է հաշիւների մէջ, ինքը չի իմացել կանոններ ու օրէնքներ, չի իմացել, թէ ինչը կարելի է, ինչը — ոչ, չի եղել մէկը, որին նա կարողանար դիմել բացատրութիւնների ու հրահանգների համար և որը պարտաւոր լինէր օգնել ու խորհուրդներ տալ նրան:

Ձի կարելի նոյնը անպայման ասել նաև մանր վարկի զիւղացիական հասարակական հաստատութիւնների համար: Այս վերջիններս միշտ գտնուել են զիւղացիական գործերի վերաբերեալ հաստատութիւնների իշխանութեան տակ, իսկ մասնաւորապէս վերջին ժամանակներս — զեմստօյի զլխաւորների իշխանութեան տակ. և այնտեղ, որտեղ այդ անձանց ու հաստատութիւնների կողմից հսկողութիւն, իսկապէս, եղել է, զիւղական կամ համայնական հին բանկերն ու դրամարկդերը գործել են և մինչև այժմ էլ գործում են շատ լաւ: Գիւղացիական դասակարգային-հասարակական-վարկային հաստատութիւնները, ինչպէս հնէրը, նոյնպէս և նորերը (նոր օրինակելի կանոնադրութեան համաձայն հիմնուած հասարակական փոխատու-խնայողական դրամարկդերը, որոնց մասին վերևը խօսեցինք), մնում են նոյն զեմստօյի զլխաւորների, տատանների, հաշտարար միջնորդների ու դրանց հաւասար պաշտօնական անձանց հսկողութեան ու ղեկավարութեան տակ:

Իսկ ընկերական վարկային հաստատութիւնների համար այժմ, նոր օրէնքի համաձայն, Պետական Բանկի բաժանմունքներին ու դրամանկաններին (конторахъ) կից գտնուած են մանր վարկի առանձին տեսուչներ, որոնք բացառապէս զբաղուած են զբաղուած: Նորա գալիս են ստուգելու ընկերութեան հաշիւները, փողերն ու դրքը. նոքա ոչ միայն պարտաւոր են տալ ցուցմունքներ, պարզել դժուարութիւնները՝ գոյութիւն ունե-

ցող ընկերութիւնների վարչութիւններին, այլ և տալիս են ամեն մի գործով հետաքրքրուող, վարկային հաստատութիւն հիմնել ցանկացող մարդուն անհրաժեշտ տեղեկութիւններ ու խորհուրդ, թէ ինչպէս լաւ է վարուել կամ ում դիմել:

Փորձը ցոյց է տուել, որ յաճախ մինչև անգամ շատ լաւ վարչութիւնը չի կարողանում գործը կարգի բերել, որովհետև ջնկերները խանգարում են վարել գործը այնպէս, ինչպէս որ հարկաւոր է: Փոխառուների մէջ, չը նայած խիստ ընտրողութեան, միշտ կը գտնուեն մարդիկ, որոնք կը ցանկանան ձգձգել, չը վճարել պարտքը. իսկ նրանց օրինակը շատ գալթակեցողից է. նրանց շաւղով գնում են նաև աւելի ճշտապահները և չենուելով չը վճարողների վրայ, իրանք էլ խուսափում են ժամանակին պարտք վճարելուց, թէև հնարաւորութիւն նեն բարեխղճօրէն կատարելու իրանց պարտաւորութիւնը: Իսկ որ վարչութիւնը դառնում է խիստ ու պաշանջող, իսկոյն վայնաս է բարձրանում. մարդիկ սկսում են «դժգոհել» իրանց վարչութիւնը և պատրաստ են փոխել ու ընտրել այնպիսին, որ ներողամիտ լինէր դէպի նրանց անճշտապահութիւնները ու անբարեխղճութիւնները: Եւ այդպիսի դէպքերում չի եղել մէկը, որ ժամանակին իւր խելացի խոսքով պաշտպանէր վարչութեանը, որ համոզէր աւելի հեռատես ու տրեստես մարդկանց (хозяйственные люди), թէ վարչութիւնը՝ պաշանջելով, որ ընկերները կատարեն իրանց պարտականութիւնները, գործում է ընկերութեան, ընդհանուրի օգտին, որովհետև այլապէս բոլորը երես կը դարձնեն ընկերութիւնից. աւանդատէրերը չեա կը վերցնեն իրանց փողերը, Պետական Բանկը ոչ միայն կը դադարի փող տալուց, այլ և չեա կը պաշանջի այն, ինչ որ տուել է. և այն ընկերութիւնը, որ օգտակար է 3—400 բանուորների, մի քանի տասնեակ յամառ չը վճարողների ու աղմկարարների պատճառով կը քայքայուի ու կը դադարի գոյութիւն ունենալուց: Յայտնի է, որ ամենամանձշտապահ, վատ փոխառուները ընդհանուր ժողովների ժամանակ ամենամեծ ու ջանդուգն աղմկարարներն են լինում:

Մանր վարկի տեսուչը քաշում է և այդ հոգսը, այսինքն՝ պաշտպանում է աւելի խոհեմ ու հոգատար մարդկանց՝ անփոյթներից ու ուրիշի հաշուով ապրել ցանկացողներից և, պէտք է ասել, որ նա այդ պաշտօնը կատարում է մեծ յաջողութեամբ, որովհետև ընդհանուր ժողովում նրա խօսքը — մի կողմնակի մարդու, անաչար ու այդ գործում չը շահագրգռուած խորհրդատուի խօսք է:

Մանր վարկի տեսուչները պարտաւոր են օգնել իրանց խորհուրդ-

ներով. նորա հսկում են ոչ միայն ընկերութիւնների, այլ և հասարակական գիւղացիական վարկային հաստատութիւնների վրայ, եթէ միայն այդ վերջիններս Պետական Բանկից օգտւում են փոխառութիւններով:

Ահա բոլոր, ինչ որ ես ուզում էի այս անգամ ասել մանր վարկի մասին:

Իմ նպատակն է, նախ՝ կրկին անգամ չիշեցնել, թէ՛ փոխառութեան կարիքը թեթեւացնելու համար ի՞նչ կարող են անել, զիւղում ու արհեստաւորների մէջ, իրանք իրար մէջ, թէ՛ իւր մի փոքր կողմնակի օգնութեամբ. և երկրորդ՝ օգնել պարզելու ամենագլխաւոր հարցերից մէկը, այն է ընտրել, թէ օրէնքով թոյլատրուած երեք տեսակի վարկային հաստատութիւններից, նրանց համար, ո՞րն է ամենից չարմարը:

Այսքան կարճ նկատողութեան մէջ, հասկանալի է, որ ամեն բան էլ չի կարելի. նախատեսել այն բոլոր հարցերը, որոնք կարող են սնդիպել գործով հետաքրքրուող մարդուն — չի կարելի: Դրա համար ամենից լաւն է, զիմեւ այն մարդկանց կենդանի խօսքին, որոնք տեղեակ են գործին և այն էլ՝ յատկապէս այդ գործի համար նշանակուած, որպիսիք են ամենից առաջ մանր վարկի տեսուչները. իսկ եթէ շուտով չը յաջողուի նրանց հետ տեսնուել ու խօսել, պէտք է ծանօթանալ գործի հետ այն գրքոյկների միջոցով, որտեղ կան աւելի մանրամասն տեղեկութիւններ ու բացատրութիւններ. իսկ այդ գրքոյկները, ինչպէս վերեն տսուած է, կարելի է պոստով ձրի ստանալ նոյն տեսչից, որ զանւում է Պետական Բանկի մօտիկ բաժանմունքում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0229966

